

սօ կը սարսափէր ոգիներէն: Ստէպ իրեն կը թուէր թէ դեւեր կը շրջին իր շուրջ... Ու, քանիցս զրեց իր բարեկամներուն՝ թէ սատանան կը ճգնի գողնալ իր դրամն ու գրութիւնները...:

Հոլանտացի մեծահոգակ աստեղագէտ Քրիստիան՝ որ էր նաեւ մեծագոյն բնագէտն իր ատենին, հասաւ այն աստիճան ան- նիւթականացման՝ որ կը կարծէր թէ իր մարմինը չունի այլեւս զիմադրական ոյժ, և թէ, կը նմանի կակուղ կարագին: Հէք բնագէտը կը վախնար, այս պատճառաւ, մօտենալու տար վառարանին՝ որ մի գուցէ հալի...:

Ատելինա Բաղդի, համբաւաւոր երգչու- հին ունէր այն հաւատքը թէ, կը պարտէր բոլոր իր յաջողութիւնները այն գուրպային՝ զոր կրեց առաջին յաջողութեան: Այս աւելորդապաշտութեամբ հագաւ, երկար տարիներ, միեւնոյն գուրպան՝ զոր չնեւեց բնաւ, երբ նոյնիսկ դարձաւ անգործածելի:

Հանրածանօթ երգչուհի զաշնակահար Ֆրեմերիք Սմեդանա՝ կը կարծէր իր վեր- ջին տարիներուն թէ, մի ձայնանիշը կը հնչէ ակնադար իր ականջին, ու այն աս- տիճան հալածուեցաւ այդ սուր ձայնէն՝ որ հարկադրուեցան վերջապէս... զինք դարմանել:

Ալեքսանդր Տիւմա որդին ոչ միայն կը հաւատար ձեռնահմայութեան՝ այլեւ կը ջանար որ իր բարեկամներն ալ հաւա- տային ծածուկ գիտութիւններու: Երբ մէկ անգամ, ձեռնահման կը նայէր իր բախտին, Ֆրեմերիք Սմեդանա՝ որ էր անհաշտ հակառակորդ ձեռնահմայութեան, իրեն այցելեց: Տիւմա առաջարկեց իր բարե- կամին՝ ցուցնել իր ձեռքը ձեռնահմային: Սա յետ մեծ ուշադրութեամբ քննելու ձեռքը այցելուին, հարցուց.

— Ի՞նչ կ'ուզէք գիտնալ:

— Կ'ուզեմ գիտնալ թէ պիտի կատար- ուի՞ կարեւոր դէպքն ասպարէզիս:

— Այո՛, ըսաւ ձեռնահման, այնպէս կը ցուցնեն գծերը ձեր ափին:

— Քանի որ կ'ուզէք զայն գիտնալ՝ ըսէ՛ք ինձ ձեր տարիքը:

Պոլինընդիեռ ըսաւ իր տարիքը՝ ու ձեռնահման յայտնեց թէ այդ դէպքը պիտի կատարուէր մէկ օր ետք: Իրաւամբ հե- տեւեալ օրն իսկ Պոլինընդիեռ անուանուե- ցաւ անդամ գաղղիական կաճառին՝ ու այդ օրէն հաւատաց ծածուկ գիտութիւն- ներու...:

*
* *

Բաց ի այս բոլորէն՝ հանճարներն ունին նաեւ արտակարգ բնութիւններ ու սովո- րոյթներ:

Օրինակ, կը պատմուի թէ Նափոյեռն տուաւ սոսկալի կից Վոլնէի՝ երբ սա իրեն ըսաւ «Գաղղիան կ'ուզէ Պուրպուրները», ու մէկ ահաւոր կոուփ Պէրթիէի՝ երբ սա զինք անուանեց «Արքայ Գաղղիոյ», ան- տեղիօրէն:

Այս հանճարը կը հաւատար թէ, մե- ծագոյն Աստղը զինք կ'առաջնորդէր: Նոյն- իսկ, ի Ս. Հեղինէ վախցաւ մէկ անգամ զիսաւոր աստղէն: Կ'ընդունէր ուրբաթն իրր անբախտ օր, ու, ամսոփայց կեանքը ժօզէֆինի՝ երբ կոտորեցաւ ապակին իր մանրանկարին, զոր կը կրէր միշտ իր հետ:

Անգուգական զօրավարն ունէր նաեւ անսանձ ներգործութիւն: Այնքան որ, եթէ նոյնիսկ ուսուսական անել արշաւանքը յա- ջողէր՝ ինք պիտի մղուէր ճակատագրօրէն այլ աւերիչ փորձութիւններու...:

Արդէն չորս միլիոն զոհեր, օտար կրքի- նակի պաշարութեան, Գաղղիան կիսուած, դարձած կասկածոտ եւրոպական տէրու- թիւններուն՝ անլո՛ւր Վաթերլոյ... ահա քաղաքական գործը Նափոլէոնի՝ արդիւնք արտակարգ փառասիրութեան...:

Պայրըն՝ որուն ուղեղը կշռեց 1,600 կրամ, ունէր արտակարգ զգայնութիւն: Այն աստիճան որ, ծայրայեղ բերկրան- քէն յանկարծ կ'անցնէր ծայրայեղ տրտ- մութեան ու՝ կ'արտասուէր... ի լուր ցա- ւազին յուշերու:

Թերեւս, այս էր պատճառն իր վաղա- հաս տարփանքին: Սիրահարեալ՝ 9 տա- րեկանին, Մարի Տիւֆի, այնպէս որ կ'անց- նէր ամբողջ գիշերներ անքուն...:

Ալֆիէրին էր վերնոտ: Կը ստիպուէր վազել փողոցները՝ մինչեւ որ իր ջիղերը հանդարտէին:

Թուվմաս Հոպպս կը տանջուէր այն երկիւղէն թէ՛ պիտի այրէր... իսկ, Վերրի՝ հանճարեղ հոգեբանը, չէր կրնար հան- դարտօրէն դիտել լեռները որ իրեն կը թուէին ուրուականներ, ու՝ զինք կը սար- սափեցնէին...:

Լէօթարտի ունէր կասկածոտ բնաւո- րութիւն: Նոյնիսկ, կասկածեցաւ թէ մէկ օր գողցան իր փողբիկ արկղը ուր կը պահէր... հին հողաթափներ: Հանճարեղ բերթողը, 1820ին, կը զրէ իր բարեկամ Ճիորտանի, թէ իր ջղային գրգիռը կը հասնի այն աստիճան ծայրայեղութեան՝ որ ինքզինք կը զարնէր գետին ու պա- տերուն՝ գոչելէն ու մռնչելէն...: Ան կը զրէ նաեւ իր մասին, «Կեանքս է ու պիտի ըլլայ միշտ առանձին, աւելի առանձին քան կոյրինն ու համբինը: Այս վերացական բացակայութիւնը զիս կը յուսահատեցնէ և, չի՛ սրբագրուիր երբեք...»:

Արդարեւ, հանճարները կ'ապրին վե- րացած: Չի կը նուիրուին մտովին այն անգին բանին որ զիրենք կը գրաւէ, ու իրենց ներքին ճիգին կը զօղէ մեծ մասն իրենց էութեան:

Հանճարները չունին նաեւ կարգ ու սարք առ հասարակ:

Օրինակ Պեթովէն: Իր գրասենեակն էր այնքան անկարգ որ՝ կրնար կոտորել մըր- ցանիշն իսկ անկարգութեան: Ո՛չ մէկ ցանիշն իսկ անկարգութեան: Ո՛չ մէկ կարասի շտկուած, նիշեր ու տետրեր ա- մէն զի, դարանները լի շփոթ ու ցրիւ, գրքեր, թուղթեր թէ նկարներ նետուած հոս ու հոն, ամէն ինչ անփոյթ, սեղան- ներ ու աթոռներ ծածկուած զանազան ձայնազրերով, որոնց մէջ իւզոտ պնակներ, ձայնազրերով, որոնց արձանիկներ, պատ- դգալներ, կոտորած արձանիկներ, պատ- կերներ ու ճերմակեղէններ, ո՛չ մէկ իր իր տեղին...: Ահա վիճակն այն մասնասե- նեակին՝ ուր մեծագոյն վարպետը զրեց իր անգուգական համբզները որ մեզ կը հի- ացնեն բոլորս...:

*
* *

Արդարեւ, անճնական կեանքը հանճա- րին կը տարբերի եսպէս իր ստեղծագոր- ծութիւններէն՝ ու, նոյնիսկ, շատ անգամ- ներ ալ՝ կը հակասէ անոնց...:

Ալեքսանդրիա ՎԱՆԱ ՇԱՀԱՅԷ

ԱԶԳ — Տարւոյս մէջ զուգադիպող կրկին Յորեկաններու — Յիսնամեակ «ՀԱՆՐԱՊԱՆԱՅԷ»-ի, և Հարիրամեակ ծննդեան ԲԱՅԱԽԻ — նուիրուած յօդուածներ պիտի հրատարակենք «Բազմա- վէպ»-ի 1938ի առաջին թիւերուն մէջ:

Այս առթիւ ըսենք թէ արդար չէր «ԿԵԱՆՔ ԵՒ ԱՐՈՒՆԵՍ»-ի յարգելի Խմբագրին մեղադրանքը մեր լուսթեան նկատմամբ Բաֆֆիի յորեկանին: Բաֆֆիի ինքնագիր գրական յիշատակներ մը Գիմումը որով կը խնդրուէր մեր գիււաններէն Բաֆֆիի ինքնագիր էինք, և այդ պարագան շատ յայտնի հանել՝ ղրկուած էր այն ատեն երբ արդէն վառքէն բացակայ էինք, և արդէն ժամանակը լրացած էր:

Երբ նոյն ազնիւ Պարոնին՝ վերագրածին մեր սեղանին վրայ գտանք խնդրագիրը՝ երբ արդէն ժամանակը լրացած էր: Վերագրածին մեր խորին համակրութիւնը հանդէպ ազգային մեծ վիպասան և հայ Բայց ցուցնելու համար մեր խորին համակրութիւնը հանդէպ ազգային մեծ վիպասան և հայ վերածնութեան գաղափարն հրահրող Բաֆֆիին՝ փութացած էինք խանդավառ իմաստով հեռագիր մը ուղղել վերոյիշեալ ազնիւ Խմբագրի հասցէին, որպէս զի կարդացուէր ան Փարիզի մէջ համագ- զային ցոյցով կատարուելիք յորեկանեան եղած էր որ կարդացած էր մեր հեռագիրը՝ իբրեւ մեր սրտագին մասնակցութիւնը մեծ վիպասանի յիշատակին նուիրուած ցոյցին:

Եւ գիտենք որ նոյն ինքն Պ. Ա. Զօպանեան եղած էր որ կարդացած էր մեր հեռագիրը՝ իբրեւ մեր սրտագին մասնակցութիւնը մեծ վիպասանի յիշատակին նուիրուած ցոյցին: Մեզի կը քննադատէ թէ ինչո՞ւ լուր է այս պարագան նոյն «ԿԵԱՆՔ ԵՒ ԱՐՈՒՆԵՍ»-ի յար- գելի Խմբագիրը:

ԽՄԲ.